ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 520 - Ա

«ԱՐԲԵԻՏԵՌ-ՍԱՄԱՐԻՏԵՌ-ԲՈՒՆԴ ԴՈՅՉԼԱՆԴ Ի ՎԻ (ԷՅԷՍԲԻ)»-Ի ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԹԻՄԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը՝

1. Բարեգործական որակել «Արբեիտեռ-սամարիտեռ-բունդ Դոյչլանդ ի Վի (ԷյէսԲի)»-ի մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանման կողմից իրականացվող՝ 6,963,934 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն Հայաստանյան արագ արձագանքման բժշկական թիմին» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Արբեիտեռ-սամարիտեռ-բունդ Դոյչլանդ ի Վի (ԷյէսԲի)»-ի մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանման կողմից (ՀՎՀՀ՝ 02870545) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սպորտմաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00212205) 2025 թվականի հուլիսի 9-ին կնքված՝ N 463/2/2025/ARM պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քնապարկերի, ուսապարկերի

և քնապարկի ներքնակների ձեռքբերում՝ 3,142,833 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արեգ» առևտրային կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 05007719) 2025 թվականի հուլիսի 8-ին կնքված՝ N 463/1/2025/ARM պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սարքավորումների, գործիքների, էլեկտրական շինարարական գործիքների ձեռքբերում՝ 3,821,100.27 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Արբեիտեռ-սամարիտեռ-բունդ Դոյչլանդ ի Վի (ԷյԷսԲի)»-ի մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանումը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

04.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ